



## Western Prelacy E-Newsletter

August 14, 2009

### **Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Կիրակի, 16 Օգոստոսը, Սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնն է, մեր եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկը, նաեւ՝ Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:

Այս առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի, ապա նաեւ տեղի պիտի ունենան անդաստանի եւ խաղողօրհնէքի ականական արարողութիւնները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի պատարագէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Կլէնտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագի ականատիւն, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ մատաղօրհնէքն ու խաղողօրհնէքը:

Նշենք նաեւ, որ արարողութիւններէն ետք, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ բացումը եկեղեցւոյ շրջափակին մէջ հաստատուած ցուցատախտակին, որուն վրայ պիտի արձանագրուին եկեղեցւոյ արարողութեանց ու ձեռնարկներուն ժամանակացոյցը: Այս ցուցատախտակը նախաձեռնութիւնն է եկեղեցւոյ երիտասարդական խմբակին:

Առաջնորդ Սրբազան հօր հրաւերով, Հոլիվուտի Սուրբ Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ այս տօնին առիթով Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Զուէյթի եւ Ծոցի Երկիրներու Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեան:

Յայտնենք, որ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեանը կարճատեւ այցելութեան մը համար Լոս Անճելըս կը գտնուի:

Նոյն առիթով, Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապազեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, եւ Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Զորոնայի, Զուրրատոյի եւ Լաս Վեկասի ծխական շրջաններուն մէջ եւս, Ս. Պատարագ պիտի մատուցուի եւ խաղողօրհնէք պիտի կատարուի 16 Օգոստոսին:

Իսկ կազմակերպութեամբ Օրենճ Քաունթի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ տիկնանց միութեան, եւ համաձայն տարիներու ականդութեան, Աստուածածնայ տօնին առիթով, Կիրակի օր, Ս. Պատարագի ակարտին, եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի պիտի ունենայ դաշտահանդէս:

Վերջապէս, Նորթ Յոլիվուտի Յայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագը եւ խաղողօրհները տեղի պիտի ունենան Կիրակի, կ.ե. ժամը 2-էն սկսեալ:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND CONDUCTS BLESSING GRAPES AT ST. MARY'S CHURCH**

On the Feast of the Assumption of the Holy Mother of God, which is also the name day of St. Mary's Church in Glendale, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrated Divine Liturgy and conduct the blessing of grapes on Sunday, August 16<sup>th</sup> at our Glendale church.

On this festive occasion, blessing of grapes ceremony will be conducted in all of our Prelacy churches at the end of Holy Mass. H.E. Arch. Gorun Babian and H.E. Arch. Yeprem Tabakian will be celebrating holy mass at St. Garabed (Hollywood) and Holy Martyrs (Encino) churches respectively.

At the end of the ceremonies at the Glendale church, His Eminence the Prelate will conduct the blessing of the newly erected post sign in front of the church.

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՂՈՐԴՆԵՔ՝ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԵՋ



Տարիներու աւանդութեան համաձայն, Ուրբաթ, Օգոստոս 14-ին, կ.ա. ժամը 10:00-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր եւ մասնակցութեամբ հոգեւոր հովիւներուն, խաղողօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ

Mission Hills-ի «Արարատ Տան» հիւանդանոցի բաժնիին մէջ, որմէ ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ հաստատութեան մատրան մէջ:



Ս. Պատարագը մատուցանեց եւ քարոզեց Փասատինայի Ս. Սարգիս Զայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւ՝ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան: Արարողութեան մասնակցութիւն բերին Թեմիս հոգեւորականաց Դասը:

Կատարուեցաւ հաւաքական խոստովանանք, ապա նաեւ խաղողի օրհնութեան աւանդական արարողութիւն:

Արարողութեանց ներկայ եղաւ Բարձր. Տ. Սմբատ Արք. Լափաճեան եւ աղօթակից եղաւ այս յիշատակելի տօնի արարողութեանց: Առաջնորդ Սրբազանը ողջունեց Սմբատ Սրբազանը, ապաքինում ու առողջութիւն մաղթեց անոր ու յոյս յայտնեց, որ ան իր աղօթքներով ու օրհնութիւններով ընդերկար ըլլայ Թեմիս հաւատացեալներուն կողքին:

Յաւարտ Ս. Պատարագի, եւ համաձայն տարիներու աւանդութեան, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը մտերմիկ պահ մը բոլորեցին հաստատութեան պատսպարեալներուն ու անձնակազմի անդամներուն հետ:



## ՆԱԵ՛ ԿԼԵՆՏԵՅԼԻ ԶԻՒՆԴԱՆՈՑԻՆ ՄԵՋ

Տարիներու աւանդութեան համաձայն, Չորեքշաբթի, Օգոստոս 12-ի առաւօտեան, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու սարկաւազները Glendale Adventist հիւանդանոցի մատրան մէջ կատարեցին բժշկութեան աղօթք եւ խաղողօրհնէք:



Արարողութենէն ետք, քահանայ հայրերը այցելեցին հիւանդանոցի հայ հիւանդներուն, աղօթեցին անոնց առողջութեան համար եւ օրհնուած խաղող բաժնեցին անոնց:



## HOLY MASS AND BLESSING OF GRAPES AT ՔԱՐԱՐԱՏՄԱՆ ՀԱՅ ՀԱՅՐԱՏՄԱՆ ՀԱՅ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ



In the morning of Friday, August 14<sup>th</sup>, and on the occasion of the feast of the Assumption of the Holy Mother of God, the Prelate presided over a special ceremonies at the “Ararat” Home, Misson Hills. Holy Mass was celebrated by Fr. Khoren Baboshian of St. Sarkis church of Pasadena, followed by blessing of grapes. The

ceremonies were conducted in the chapel and in the hospital section of the establishment.

H.E. Arch. Sumpad Lapajian joined in prayers during the ceremonies. The Prelate saluted Arch. S. Lapajian and wished him good health and swift recovery.



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 13 Օգոստոսի յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազանը ընդունեց հանրածանօթ հրապարակագիր, Լինսի Հիմնարկութեան փոխ նախագահ Եւ Միացեալ Հայկական Հիմնադրամի նախագահ Տիար Յարութ Սասունեանի այցելութիւնը:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Ազգ. Առաջնորդարանիս հետ Լինսի Հիմնարկութեան տարիներու գործակցութեան կապուած հարցերու մասին:

Ծանօթ է որ Լինսի Հիմնարկութիւնը աւելի քան տասնամեակէ մը ի վեր ամեն տարի իշխանական յատկացումներ կը կատարէ ազգային Վարժարաններուն, իբրեւ զօրակցութիւն ու քաջալերանք՝ անոնց սերնդակերտ աշխատանքներուն ու բարգաւաճման ծրագիրներուն:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց Լինսիի զօրակցութեան համար ու յոյս յայտնեց, որ Ազգ. Առաջնորդարանիս հետ անոր գործակցութիւնը կը շարունակուի անշէղ ընթացքով:

Խորհրդակցութիւնը ընդգրկեց նաեւ Միացեալ Հայկական Հիմնադրամի գործունեութիւնը: Հիմնադրամի վարչական խորհրուղը իր հերթական ժողովը կ'ունենայ Շաբաթ, 15 Օգոստոսին:

Ծանօթ է, որ Յ. Սասունեան յիշեալ Հիմնադրամին նախագահն է ու երախտաշատ աշխատանք կը տանի հիմնադրամի հայրենասուեր ծառայութիւններուն իրագործման մէջ: Հիմնադրամին անդամ է Ազգային Առաջնորդարանս:

Հանդիպումը նաեւ առիթ եղաւ խորհրդակցելու մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող այժմեական հարցերու մասին:

### THE PRELATE MEETS WITH HAROUT SASSOUNIAN



On Thursday, August 13<sup>th</sup>, Mr. Harout Sassounian, the vice chair of the Lincy Foundation and the president of United Armenian Fund visited the Western Prelacy and was welcomed by His Eminence the Prelate.

During the meeting, issues related to the collaboration of the Prelacy and the Lincy Foundation were discussed. The Lincy Foundation has for many years provided significant assistance to the Prelacy schools to support their development projects. The Prelate once again extended his thanks to the Lincy Foundation and expressed confidence that the collaboration will continue in the future.

Also were discussed issues related to the mission of the U.A. Fund. The Prelacy is a member of this Fund which provides enormous assistance to Armenia.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՉԳ. ՌՈՉ ԵՒ ԱԼԵՔ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՏՆՕՐԵՆ ՆԱԶՕ ԱՔԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ազգային Ռոզ Եւ Ալեք Փիլիպոս Երկրդ. վարժարանի նոր նշանակեալ տնօրէնը՝ Տիար Նազօ Աբանեան, Ուրբաթ, 14 Օգոստոսի յետմիջօրէին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր կողմէ:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց Տիար Ն. Աբանեանը, անդրադարձաւ կրթական ասպարէզին մէջ անոր վաստակին, սկստի ունենալով, որ ան նախորդ տարիներուն, իբրեւ ուսուցիչ ու հայկական բաժանմունքի պատասխանատու, երկար ծառայութիւն մատուցած է նոյն վարժարանին:

Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ Տիար Ն. Աբանեան նոյն թափով շարունակէ իր աշխատանքը, իբրեւ շարունակութիւն՝ նախկին տնօրէններուն ու դաստիարակներու ներդրումին, եւ վարժարանը դէպի վերելք առաջնորդելու անոնց ճիգին:

Տիար Ն. Աբանեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին, անոր զօրակցութեան ու օրհնութեան համար, ապա նաեւ լուսաբանութիւններ տուաւ վարժարանի յարկին տակ իր սկսած աշխատանքներուն ու նուազ քան ամիս մը ետք նախատեսուած ուսումնական նոր տարեշրջանի ծրագիրներուն մասին:

Ան այս առիթով հրաւեր ուղղեց Առաջնորդ Սրբազանին, որ վարժարանի աշակերտներուն ու դաստիարակներուն հետ ըլլայ վերամուտի առաւօտուն եւ իր աղօթքով ու պատգամով բացմունը կատարէ նոր տարեշրջանին:

## **THE PRELATE WELCOMES THE NEWLY APPOINTED PRINCIPAL OF ROSE AND ALEX PILIBOS SCHOOL AT THE PRELACY**



In the afternoon of Friday, August 14<sup>th</sup>, Mr. Nazo Apanian, the newly appointed Principal of Rose and Alex Pilobos High School in Hollywood paid a visit to the Prelacy and was welcomed by his eminence the Prelate.

Mr. N. Apanian briefed the Prelate with the plans and projects for the forthcoming school year and invited the Prelate to join the school staff and students on the morning of the first school-day of the year 2009-2010.

The Prelate wished Mr. N. Apanian success in his new mission and expressed confidence that he will do his best to pave new avenue of achievement for the school. Mr. N. Apanian has served at the school for many years.

## ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ Մ.Տ. ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՄԱՆ ՍԵՄԻՆԱՐԻՆ

Այս շաբաթասկիզբին, 11-ին 14 Օքտոբրին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական կազմաւորման Գ. Սեմինարը:



Սեմինարին կը մասնակցէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներկայացուցիչներ, որոնք զանազան առիթներով Հայ Եկեղեցին կը ներկայացնեն միջ-եկեղեցական ու միջ-կրօնական համագումարներու:

Մասնակիցներու շարքին էին նաեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի մէջ յատուկ աշխատանք կատարող Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեր եկեղեցիներու երիտասարդական միութիւններու անդամներ: Կը մասնակցէին նաեւ Հայ Համալսարանական Ուսանողներու Միութեան եւ Կիրակնօրեայ Դպրոցներու վարչութեանց պատկանող անդամներ:

Առաւօտեան ժամերգութենէն ետք, Դպրեվանքի 'Բրաբիոն Տումանեան' հանդիսասրահին մէջ, Կաթողիկոսութեան Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեւմեզեան ներկայացուց սեմինարին նպատակը:

Բացման նիստին, ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական յարաբերութեանց յանձնախումբի ատենապետուհի Դոկտ. Նորա Պայրազտարեան-Գապագեան: Ան ընդգծեց ներկայ ժամանակներու մարտահրաւերները, եւ կարեւորութեամբ անդրադարձաւ եկեղեցիներու ու կրօններու դերին:



Ապա, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը իր հայրական խօսքը ուղղեց մասնակիցներուն, գլխաւորաբար շեշտելով ճանչնալու, ճանչցնելու ու մասնակցելու գաղափարները:

Միջ-եկեղեցական շարժման մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ունեցած գործօն մասնակցութեան ու որակաւոր դերակատարութեան առաւել աշխուժութիւն տալու կոչուած սոյն Սեմինարին մասնակիցներէն Վեհափառ Հայրապետը պահանջեց գիտակից, լուրջ ու բժախնդիւր մօտեցում:

Արամ Ա. Կաթողիկոս հայ եկեղեցւոյ ճանաչողութիւնը իր պատմութեամբ ու աստուածաբանութեամբ, աւանդութեամբ ու տօներով նկատեց անհրաժեշտ, միջ-եկեղեցական կեանքին նուիրուած անձերուն համար:

Երկու օրերու ընթացքին, համագումար զրոյցներով ու զեկոյցներով, դասախօսական նիստերով ու քննարկումներով շարունակեց իր աշխատանքները:

Յայտնենք, որ Արեւմտեան մեր Թեմէն սոյն համագումարին մասնակցեցան երկու պատգամաւորներ<sup>a</sup> Բարեշնորհ Ռաֆֆի Սարկաւազ Կարապետեան ու Օր<sup>©</sup> Մարիա Աբրահամեան

## **THE PRELACY PARTICIPATES IN THE INTER-CHURCH SEMINAR REORGANIZED BY THE HOLY SEE AT THE CATHOLICOSATE**

Representatives from the Prelacies of the Holy See of the Great House of Celicia participated convened at the Catholicosate this week, from August 11 to 14, for the third Ecumenical Formation Seminar seminar organized the Catholicosate in Antelias, Lebanon. Our Prelacy was represented by two delegates; Deacon Raffi Garabedian and Miss Maria Abrahamian.

The seminar was held under the auspices of His Holiness Catholicos Aram I, who invited the participants to become true delegates of the Armenian Apostolic church and dedicate their time and effort for this purpose.

The program consisted of sessions of prayers, instructive lectures and workshops.

-----

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our website at [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)  
Copyright © 2007 All rights reserved.